ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4672-Ա « 18 » նոյեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ.11 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 12.11.2025թ. հ.Ն/67486-25 գրությունը, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 06.11.2025թ. հ.887-Ա որոշումը և ՀՀ ՆԳՆ «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից 07.03.2014թ. տրված եզրակացությունը՝ «Երևան քաղաքի Ռուսթավելու փողոցի թիվ 19 հասցեում գտնվող թիվ 11 նախադպրոցական ուսումնական հաստատության տեխնիկական վիճակի վերաբերյալ» և հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 61-րդ հոդվածի դրույթները.

1.Ժամանակավորապես դադարեցնել «Երևանի հ.11 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գործունեությունը՝ 2025 թվականի նոյեմբերի 18-ից:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել «Երևանի հ.11 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա.

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ